

Ներկայ ժամանակումս երբ քաղաքական պայմանները չեն պահանջում քաղաքներում այլպիսի շինութիւններ, և երբ հետզհետէ սովորութենք գնահատել մաքուր օղը, այս բարբարոսականաժամանակի մացորդները դառնումն ևս առաւել անբաղդութիւն, որովհետեւ նորանք շատ անգամ անյաղթելի արգելք են լինում քաղաքների առողջապահական պայմանները լաւացնելուն:

Այժմս մենք շատ յօժարութեամբ քանդած կլինեինք քաղաքների տների տմբողջ կարգերն ու թաղերը, բայց ափսոսոր շատ գժուար է ուստի պէտքէ բաւականանալ միայն նորանով, որ եթէ յաջողուի կոտրել մի օրեւ է տեղ (прогалинка) և ճանապարհ տու արեի ճառագայթները քաղաքի բնակարաններում ներս մացնելու համար:

(Ըստ Հայութիւնի):

Ա. Տ. Գաբրիէլլան.

ԸՆՏԱՆԻՔԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ.

(Ահայլէց)

Ընտանիքը կազմումէ առաջին և ամենակարևոր դոլոց, ուր գաստիւրակումէ մարդի բնաւորութիւնը: Նորա մէջ մարդը ստանումէ իւր ամենալաւ կամ ամենավատ բարոյական կրթութիւնը: որովհետեւ նա ընտանիքի մէջ է առնում իւր վարքի կանոնները, որոնք նորան այլ ևս չեն թողնում մինչեւ նորա կեանքի վերջը:

Շատ գործնական է այս առածը թէ: « ձեւերը մարդին մարդ են շինում», և զարձեալ ուրիշը: « միտքը մարդին մարդ է շինում»: բայց սոցանից աւելի ճիշտը երրորդ առածն է թէ « ընտանիքը մարդ է ստեղծում»: տնային զաստիաբակութիւնը իւր մէջ ոչ միայն խելքի և ձեւերի զարգացումն է պարունակում, այլ և բնաւորութեան զարգացումը: Ընտանիքի մէջ զիսաւորապէս զարգանումէ սիրու, ստեղծումն սովորութիւններ, զարթնումէ միտքը և կազմումէ բնաւորութեան լաւ կամ վատ շտեմարան: Այս իսկ ալզեի բից, լինի նա մաքուր կամ վարակիչ, բղխումն բոլոր հիմական կանոնները, որոնցով հասարակութիւնը առաջնորդումէ: Նշնիսկ օրէնքները յառաջանում են ընտանիքից: մասնաւոր կեանքի ժամանակ մանուկների մտքում ցանւած ամենաչնչին (հատւածական) կարծիքներն անգամ վերջերում հանդէս են դալիս և գառնում են հասարակական կարծիք: ազգերը դուրս են գոլիս մանկական սենեակից: և այն մարդիկը, որոնց յանձնած է առաջնորդ լինել մանսէկի առաջին քայլերին, կարող են մինչեւ անգամ աւելի ազգեցութիւն ունենալ քան թէ նոքա, որոնց ձեռքում գտնումէ կառավարութեան սանձը, ժիւլ Սիմոնը ասումէ: « եթէ քաղաքական բարեգործութիւնների հիմը չեն կազմում նոցա սրբագործող ընտանեկան բարեգործութիւնները, այն ժամանակ քաղաքական

բարեգործութիւնները գործւած են իցոյցս մարդկան։ Այն մարդը, որ իւր որուն սիրող սիրտ չունի, անշուշտ նա չի կարող դեպի մարդկութիւնը անկեղծ սէր ունենալ։

Հատ բնական է, որ ընտանեկան կեանքը հասարակական կեանքի համար պատրաստութիւն պիտի լինի, և որ թէ միտքը և թէ ընառութիւնը իւրեանց սկզբնական զարգացումը ընտանիքի մէջ են ստանում։ Նորա մէջ առանձնապէս են գաստիարակում՝ իւրաքանչիւր անհատին։ ուրոցից յետոյ կկազմի հասարակութիւնը։ Ընտանիքից նոքա կեանքի մէջ են մտնում։ և նոքա որ մանուկ էին, քաղաքացիներ են լինում։ Այս պէսով ընտանիքի վերայ կարելի է նայել, ինչպէս լուսաւորութեան ամենազգօղ դպրոցի վերայ։ որովհետեւ քաղաքակրթութիւն է անում։ Մարդու աշխարհ է գալիս անօգնական, և բոլորովին կախումն ունի իւրեան շրջապատողներից թէ կերակուրի և թէ զարգացման վերաբերմամբ։ Նորա առաջին հառաջանքի հետ մանկութեան ժամանակ ստացած կրթութեան չափով։

Քարոյական մթնոլորտը, որի մէջ մարդու անց է կացրել իւր կեանքի առաջին տարիները, մինչեւ անգամ ամենախելացի մարդի ապագայ կրթութեան վերայ շատ մեծ ազդեցութիւն է անում։ Մարդու աշխարհ է գալիս անօգնական, և բոլորովին կախումն ունի իւրեան շրջապատողներից թէ կերակուրի և թէ զարգացման վերաբերմամբ։ Նորա առաջին հառաջանքի հետ մանկութեան չափով ակսում է նորա դաստիարակութիւնը։ Մի անգամ մի մայր հարցրեց մի հօգևորականի։ «ո՞ր ժամանակից նա պիտի սկսէ իւր մանուկի դաստիարակութիւնը, որը սյդ միջոցին չորս տարեկան էր»։ Եթէ զուք մինչեւ ցայսօր չէք սկսած նորա դաստիարակութիւնը, — պատասխանեց հօգևորականը, տպա կորցրել էք չորս տարի, — մանուկի դէքի վերայ ժամանակը լելուն պէս զուք պէտք է սկսէք նորա դաստիարակութիւնը»։ Այս դէպքում դաստիարակութիւնը արդեն սկսւեցաւ մանուկի համար, ի հարկէ անգիտակցաբար, նա սովորումէ ուրիշին նմանելով, և առանց իւր կողմից ամենափոքր աշխատութիւն գործ դնելու։ «Թուզի ծառը նայելով ուրիշի վերայ պտղաբեր է լինում»։ — ասում են Արարները, Այս պէս են և մանուկները։ Նոցա առաջին և զինաւոր ուսուցիչը օրինակն է։

Բայտ երևութին, որչափ և չնչին ու աննշան լինէին տպաւորութիւնները, որոնք օգնումն մանուկի բնաւորութեան կազմելուն, նոքա մնումն մանուկի մէջ նորա կեանքի ամբողջ ընթացքում։ Մանուկի բնաւորութիւնը չափահասի բնաւորութեան միջուկն է, բոլոր հետագայ դաստիարակութիւնը ոչ ոյլ ինչ է՝ եթէ ոչ խաւեր, բիւրեղի առաջին ձեւը մնումէ անփոփոխ։ Ուրեմն շատ ճշմարիտ են բանաստեղծի խօսքերը թէ՝ «մանուկը չափահաս մարդի հայրն է»։ Կամ ինչպէս Միլտոնը այս միտքը արտայայտեց։ — «մանկութիւնը ցոյց է տարիս, թէ մարդը ինչպիսի պիտի լինի, ինչպէս որ առաւօտը ծանուցանումէ, թէ ինչպէս պէտքէ լինի օրը»։ Այս կամ այն տեսակ կեանք վարելու ցանկութեան արմատը մեր

որօրոցի մօտն է գանւում։ այստեղ ցանւումն այն բարեգործութեան կամ յանցանքների սերմերը որոնցով ամբողջ կեանքում որոշումնեան մարդի բնաւորութիւնը։

Մանուկին կործիս թէ թողնումն նոր աշխարհի սեամի մօտ։ Նա բաց է անում աշքը, և լոլոր տեսածը իւր համար նոր է և զարմանալի։ Սկզբում նա բաւականանումէ միայն զիտելով։ բայց յետոյ, վարք առ փոքր ոկտումէ ճանաչել, զննել, համեմատել, ուսումնասիրել։ հաւաքել տպաւորութիւններ և մաքեր, և եթէ նա առաջնորդուումէ խոհեմ և ինելացի կերպով։ նորա յառաջադիմութիւնները կարող են լինել իբաւի զարմանալի։ Լորդ Բրումը նկատեց որ 18-30 ամսական մանուկը նիւթական աշխարհի, իւրուժերի, այլևսյլ առարկաների յատկութիւնների մասին։ և մինչեւ անգամ իւր և ուրիշների խելքի մասին աւելի է տեղեկութիւն ստանաւմ։ քան թէ իւր մնացած կեանքի ժամանակ։ Գիտութիւնը որ մանուկը ձեռք է բերում, և մաքերը, որ ծնւում են նորա մաքքի մէջ այն շրջանում, այնչափ նշանաւոր էն, որ եթէ կարելի լիներ երեւակայել, թէ նոքա վերջը մոռացւում էն։ այն ժամանակ Ամբրիի կամ Օկսֆորտի ամնալաւ ուսանողների զիտութիւնը բոլորովին անօգուտ պիտի լիներ։ և նա այդ գիտնական ուսանողներին միջոց չոլիտի տար իւրեանց գոյութիւնը մի շարաթ ևս երկարածելու։

Մանկութեան ժամանակը միտքը բաց է բոլոր տպաւորութիւնների համար և պատրաստ է իւր վերայ ընկած առաջին կայծից բռնկւելու։ Պատշաճարները ընդունւումն շուտ և մնումն երկար։ Ըսումն, որ Վոլթէր — Սկօստը իւր առաջին համակրութիւնը և ուրը զետի ազգութին երգերը՝ ձեռք բերեց լսելով, երբ որ նորա մայրը և տատը նորանց պատմում էին նորան գեռ իւր անձամբ կարդալ սկսելուց շատ վաղ։

Մանկական յիշատակները նման են հայելու։ նոցա մ.ջ մարզս տպացայ ժամանակում՝ տեսնումէ իւրիան առաջին անգամ երկած պատկերները։ Առաջին տպաւորութիւնները մնումն ընդ միշտ մանուկի հետ։ Առաջին ուրախութիւնը՝ առաջին վիշտը, առաջին յառաջադիմութիւնը, առաջին անյաջողութիւնը, առաջին զիւտը, առաջին անբաղադրութիւնը կազմումն նորա ապագայ կեանքի ընդհանուր գոյնը։

Բոլոր այս ժամանակում՝ կատարւում բնաւորութեան, բարքի, կամքի և սովորութիւնների կազմութիւնը՝ կազմութիւնը, որից այնչափ նշանաւոր աստիճանով կախումն ունի մարզի բաղաւորութիւնը կեանքի վերջերում։ Թէպէտ և մարդին պարզեած է ինքնագործութիւն, որը կազմումէ ինքնուգնութեան ոյժ, որով պիտի գործակցէ իւր սեփական զարդացմանը բոլորովին անկախ շրջապատող հանգամանքներից։ և աղդեցութիւն գործէ շրջապատօղ կեանքի վերայ սակայն նորա բարոյական բնաւորութեան ցոյց տուած ուղղութիւնը կեանքի վաղ ժամանակում, շատ մեծ նշանակութիւն ունի։ Դրէք մինչև անգամ ամենախորամիտ փիլիսոփային ալնօրեայ, անմիսիթար, անբարոյական, ստոր շրջանի մէջ, և նա աննկա-

տեղի կերպով պիտի ձգտի դէսի վայրենութիւնը Կարելի է երեակայել, թէ ինչ աստիճանի շուտով է ընդունում այդպիսի ազգեցութիւններ գիւրաւ ազգեցութեան ենթարկւող անօքանական մանուկը որը գտնւումէ այդպիսի շրջանի մէջ։ Քոլորովին անկարելի է դաստիարակել հեղարարայ, բայց զգայուն դէօփի չարը մաքով և սրտով բնութիւն կոպտութեան, անմիմիթար զբութեան և բարոյական անմաքրութեան մէջ։

Այսպէսով այն տեղերը ուր կրթումն մանուկները, որոնք պատրաստում են այլ կամ կին լինելու կլինեն լաւ կամ վաստ նայելով թէ այնտեղ ինչ տեսակ ազգեցութիւն է տիրապետում։ Այն տունը, ուր կայ սէր և պարտաճանաչութիւն, ուր բանականութիւնը և լուրջ խոհեմութիւնը ներդաշնակում են կառավարութեան մէջ, ուր հանապազօրեայ կեանքը ազնիւ և առաքինի է, ուր կառավարութիւնը որոշումէ զբայունութեամբ բարութեամբ և սիրով, այնտեղից կարելի է սպասել, որ գուրս կդան առողջ մաքով, օգտակար և բարեբաղտ մարդիկ, որոնք ընդունակ կլինին, երբ ձեռք կրերեն հարկաւոր ոյժ, իւրեանց ծնողների գնալու շաւով, միշտ ազնւութեամբ ապրելու, իւրեանց խոհեմութեամբ կառավարելու և իւրեանց շրջապատողների բարեկեցութեանը օգնելու։

Ընդհակառակներ եթէ մանուկները շրջապատած են տգիտութեամբ կոպտութեամբ և ինքնասիրութեամբ, նորա անդիտակիցարար իւրացնում են այդպիսի բնաւորութիւնը և հասնելով չափահաս տարիքին, լինում են կոպիտ, անզարգացեալ և մինչեւ անզամ հասարակութեան վեսասակար անձներ։

* Ստրուկի տուէքք ձեր որդիները դաստիարակելու, — ասումքը մի վաղեմի Յոյն, — և մէկի մոխանուկ երկու ստրուկ կունենաք։

Մանուկը չի կարող չնմանել իւր տեսածին, նորա համար բոլորը օրինակ են, — և ձեւերը և շարժումները, և լեզուն, և սովորութիւնները, և բնաւորութիւնը։

Ամեն մի նոր զաստիարակ աւելի քիչ ազգեցութիւն է անում՝ քան թէ իւր նախորդը, և մինչեւ անզամ, եթէ վերջապէս մենք զիտենք նորա բոլոր կեանքը, մենք կտեսնենք, որ երկրի շուրջ շրջող մի նաւազնացի վերայ իւր բոլոր տեսածները աւելի քիչ ազգեցութիւն են անում՝ քան թէ ստընտուն մանուկի վերայ։ Այսպիսով, օրինակները մանուկի բնութեան գնազրութեան մէջ ամենամեծ նշանակութիւն ունին, եթէ կամենում ենք լաւ բնաւորութիւններ ունենալ, ապա անպատճառ պարտական ենք նոցա առաջ գնելու լաւ օրինակներ։ Ի հարկէ, միշտ մանուկի աչքի առաջ գտնւած օրինակը իւր մայրն է։

* Մի լսւ մայրը, — Զորժ Նէրբէրտ առումէ, «Հարիւր զպրոցական ուսուցիչներ արժէ։ Տան մէջ նա ծառայում է բոլը որտերի համար մազնիսի տեղ և բոլոր աչքերի — հիւսիսային աստղի տեղ»։ Մօր նմանիլը լինում է մշտական, — որը Պէտոնը անուանում է «դասերի ամբողջ աշխարհ»։ Բայց օրինակը աւելի նշանակութիւն ունի քան թէ պատուէրը։ Կա ևս

ուսումն է — միայն թէ դորձողութեան ձևով : Աս ուսումն է առանց բառերի, որը յաճախ աւելի է բացատրում : Քան թէ կարօղ է ուսուցանել լեզուն Երրև վատ օրինակներ ամենալաւ պատուէրները շատ քիչ նշանակութիւն ունին : Օրինակին հետեւմ են, բայց պատուէրներին՝ ոչ : Յիշրաւի պատուէրը, առանց գործնականի, մինչև անգամ աւելի վատ է քան թէ անօգտակար : Նա միայն ընտելացնում է յանցանքներից ամենասուրբինին — կեղծաւորութեանը : Մանուկները չափահաններից վատ չեն հասկանում խառի համաձայնութիւնը դորձի հետո և այնպիսի ծնողի գասերը, որը մի բան է ասում և նորա հակառակ ուրիշ բան է անում : Չուտ մանուկները ամբողջողես կղուահատեն : Գին չունի այն վարդաղետի ազնութեան վերայ խօսած քարոզը : Որը մի և նոյն ասած ժամանակ իւր վերարկուի թեւերի մէջ պահած ունի գողացւած սազը :

Այլոց վարժութիւնն նմանողական ճանապարհով կազմում է մանուկի բնաւորութիւնը : — Թէուէտ և զանգաղ և անիմանալի կերպով, բայց վըշողապէս : առանձին վարժունքները ինքն ըստ ինքեան կարող են չնչին բաներ երեխ, բայց այդպիսիներն իսկ ընդհանրապէս լինում են առօրեայ կեանքի մշտական երեսյթներ : Զեան գնդակի նման + նորա աննկատելի կերպով ընկնում են նշանաւոր փոփոխութիւն չէ յառաջացնում, միւսների գէղին աւելցած իւրաքանչիւր առանձին գնդակը մինչդեռ այդպիսի ձիւնոյին գնդակների զիզելուց կազմուում է ձեան հիւս : Այսպէս մինը միւսից յետոյ կրկնուող գործողութիւնները վերջապէս, հաստատուն սովորութիւն կդառնան : կորոշեն մարդիս գոյութեան ուղղութիւնը կամ դէպի բարին կամ դէպի չարը : — կարճ ասած, կկազմակերպեն բնաւորութիւն :

Որովհետեւ մայրը հօրից առաւել շատ ազդեցութիւն ունի մանուկի գործերի և վարքի վերայ, ուստի և տան մէջ նորա օրինակը ևս աւելի նշանակութիւն ունի : Գիւրին է հասկանալ, թէ ինչի այս այսպէս է : Տունը կնոջ ստացուածքն է, նորա թագաւորութիւնն է, ուր նա վայելում է կատարեալ իրաւունք : Նորա իշխանութիւնն անսահման է իւր կառավարած շատ սակաւ հպատակների վերայ : Նորա նորան են զիմում ամեն պատճառի համար : — Միշտ գտնւելով նոցա աչքի առաջ, նա նոցա համար օրինակ և տիզար է : Նորա անզիտակցարար նորան են զիտում և նորան նմանում :

Կօսւլին, խօսելով սկզբնական օրինակների ազդեցութեան մասին և մարդի մէջ վաղ ժամանակում գաղափարներ մտցնելու մասին : Համեմատում է նոցա նորաբողբոջ ծառի վերայ փորագրւած տառերին, որոնք աճում են և հասակի չափով լայնանում : Այն ժամանակւայ ստացած տպաւորութիւնները, որչափ ևս նորա աննշան երեխն, երբէք չեն ջնջում : Մարդի մէջ հաստատւած կարծէքները նման են երկրի մէջ ցանւած սերմերին, որոնք այնտեղ մնալով՝ ժամանակին բողբոջներ կարձակեն և ի վերջոյ աճելով կդառնան գործեր, մոքեր և սովորութիւններ

Այսպիսով՝ մայրը նորից ապրում է իւր մանուկների մէջ։ Անդիններս կազմակերպում են մօք վարմաւնքին համաժայն։ Նորա կեանքի և գործու գործեան եղանակով։ Նորա սովորութիւնները զառնում են նոցա սովորութիւններ։ Նորա բնաւորութիւնը ակն յայտնի յառաջանում է նոցա բնաւորութեան մէջ։

Այս մայրական սէրը մարդկային ցեղի զգալի նախախնամութիւնն է։ Նորա ազգեցութիւնը յարատում է և ընդհանուրու նա սկսում է մարդկային եռութեան գաստիարակութեամբ կեանքի արշալոյսի ժամանակ և շարունակում է մինչև կեանքի վերջը ամենահզօր ազգեցութեան ուժով։ որով իւրաքանչիւր բարի մայր ազգում է իւր որդիների վերայ։ Երբ հասնում է մանուկներին կեանքի մէջ մտնելու ժամանակը, նորա անձամբ մասնակցումն նորա գործերին, ազմուկներին, փորձերին, այնու ամենայնիւ դժուարութիւնների և խռովութիւնների օրերում զառնում են զէսի իւրիաց մայրը։ եթէ ոչ խորհուրդի՝ գոնէ մսիթարութեան համար։ Մօր՝ նոցա մոքի մէջ հաստատած ազնիւ և բարի մաքերը բողոքում են իրեւ ազնիւ գործեր նորա մահից երկար ժամանակ յետոյ։ և երբ մօրից՝ անուան յիշատակից զատուրիշ ոչինչ չե մնում։ ահա այդ ժամանակ տղայքը նորան փառաբանումն։ Մենք ամենեին չափազանցութիւն արած չենք լինիլ եթէ ասենք, թէ երջանկութիւնը կամ թշուառութիւնը լուսաւորութիւնը կամ տղիառութիւնը քաղաքակրթութիւնը կամ բարբարոսութիւնը երկրի վերայ շատ նշանաւոր աստիճանով կախումն ունին կանանց արած ազգեցութիւնից։

Եմերսօնը հեռատեսութեամբ և ճշմարտութեամբ ասում է, որ բարի կանաց ազգեցութիւնը քաղաքակրթութեան բաւական ճիշտ չափն է, Կարելի է ասել, որ մեր առաջ կեցած է մեր սերուղը մանուկի աեսքով մօր բազուկների վերայ։ Մանուկի ապագայում ինչ լինիլ կախումն ունի զիմաւորապէս այն դաստիարակութիւնից և օրինակից։ Բնչպիսին են որ նա ստացած է իւր առաջին և ամենաշատ ազգեցութիւն գործող զաստիարակից։

Իինը բոլոր միւս դաստիարակներից աւելի մարդասիրաբար է դաստիարակում։ Այրը մարդկութեան ուղեղն է, իսկ կինը — սիրտը, այրը բանականութիւնն է, իսկ կինը — զգացմունք, այրը ոյժ է, կինը — գեղեցկութիւն, զարդ և մսիթարութիւն։ Այսպէսով, եթէ մարդը բանականութեան ուղղութիւնն է տալիս, կինը զարգացնում է նորա զգացմունքը, որը և զիմաւորապէս որոշում է նորա բնաւորութիւնը։ Մարդը լցուցանում է յիշողութիւնը, կինը — սիրտը։ Մարդը մեղ ստիպում է սիրել այն որին մենք կարող ենք հաւատ ընծայել։ կիոջ միջոցով, զիմաւորապէս, մենք կարող ենք հասնել բարեգործութեան։

Հօր և մօր փոխազարձ ազգեցութիւնը դաստիարակութեան և բնաւորութեան զարդացման վերայ շատ պարզ կերպով յայտնեցաւ սուրբ Օգոստինոսի կեանքի վերայ։ Նորա հայրը, Տաղաստի (հին նոր միզիայ Քաղաքի) աղքատ բնակիչ, հպարտացած իւր որդու ձիրքերով, աշ-

խառում էր նորան դաստիարակել բարձր զիտութիւններով. հարեանները դովումին նորան իւր այն զոհարերութիւնների համար, որոնք նա անում էր այս նպաաակով և աւելի քան թէ իւր միջոցները ներում էին. միւս կողմից Օգոստինոսի մայր Մօնիկա աշխատում էր իւր որդու միաբը ուղղել, առաւելապէս, զէպի բարին. և բարեպաշտ հոգացողութեամբ, խորհուրդներով, աղաչանքներով, պատութիւններով զանք էր անում նորան ազնւութեան մէջ պահպանել նա վշտի և նեղութեան մէջ որդու անբարոյական կեանքի պատճառով չէր զադարում աղօթելուց մինչեւ այնժամանակ, երբ որ նորա աղաչանքը լսելի եղաւ և կատարւեցաւ. Եայ պէսով նորա ուրբա վերջապէս, յազմանակեց. մօր համբերութիւնը և բարութիւնը վարձատրւեցան նորանով, որ թէ իւր շնորհալի որդին և թէ իւր ամուսինը ետ կեցան իւրեանց թիւր ճանապարհից. Աերջերում իւր ամուսնու մահից յետոյ Մօնիկան սէրից շարժւած՝ գնաց որդու հետ Սիւն նորան միշտ իւր աչքի առաջ ունելու համար. նա այն աեղ և մեռու 33 տարեկան հասակում. Բայց նորա օրինակը և պատուերները կեանքի վաղ ժամանակում ամենախոր տպաւորութիւն դործեցին մանուկի մոքի վերայ և որոշեցին նորա ապագայ բնաւորութիւնը.

Այսպիսի շատ օրինակներ կանու որ տապաջին տպաւորութիւնները մասնուկի խելքի վերայ՝ ապագայում յայտնեցան կեանքի մէջ բարի գործերով, եսականութեան և յանցանքի միջանկեալ շրջանից յետոյ. Ծընողները անում են այն ամենը, ինչ որ հնարաւոր է, որ զարգացնեն մասնուկների մէջ ճշմարտասէր և բարեգործ բնաւորութիւն, և ըստ երկոյթին — ի զուր Այս կարելի է զուրը ձգւած հացին նմանեցնել, որը յետոյ կորչում է. Բայց, այնու ամենայնիւ երբեմն պատահումէ, որ ծնողների մահից յետոյ երկար ժամանակ քսան կամ աւելի տարի անցնելով — որդուն կամ զստեր տուած տղայութեան ժամանակրարի պատուերը, բարի օրինակը, վերջապէս զուրս գալով պտուղ է տալիս.

Այսպիսիների ամենանշանաւոր օրինակներից Օլնեացի Թօն Նի, թօն Կոռուպէր բանաստեղծի բարեկամն էր. Սա իւր ծնողների մահից յետոյ շատ ժամանակ անցնելով, երիտասարդական արատաւոր կեանքի մի քանի տարիներից յետոյ, թէպէտ և նաւասարի բայց յանկարծ ճանաչեց իւր անբարոյական կեանքը, և հեց այդ ժամանակ՝ իւր մանուկ հասակում մօր տուած զստերը իւր յիշողութեան մէջ զարթնեցան. նորա ձայնը կարծես թէ, զագաղից հասաւ երիտասարդի ականջին և աստիճանաբար զարձրեց նորան զէպի բարեգործութեան ճանապարհը.

Ահաւասիկ պիլ օրինակ. Թօն Բանգոլից որ ամերիկական պետական մարդ էր, ասաց միանգամ. « Ես անաստուած կլինէի, եթէ ինձ արգելք չլինէր մի յիշատակութիւն, յիշատակութիւն այն ժամանակի մասին, երբ որ իմ հանգուցեալ մայրը իմ փոքրիկ ձեռներն իւր ձեռների մէջ առնելով, ստիպում էր ինձ ծունկի վերայ ընկնել և ասել. « Հայր մեր, որ յիրկինս ես... ». Բայց ընդհանրապէս, այդպիսի օրինակները հարկաւոր է բացառու-

թիւններ համարել։ Բնաւորութիւնը կեանքի վաղ ժամանակում ինչից բաղադրւեցաւ՝ նոյնպէս և սովորաբար մնում է, — ընդունելով առափանաբար վերջնական ձև, հասուն հասակի հասնելու չափով։

* Դուք որչափ և երկար ապրիք, — ասում էր Սուտի, — բայց առաջին քսան տարին ձեր կեանքի ամենաերկար մասն է ։ բացի զորանից, այս տարիները աւելի շատ հետևանքներ են ունենում։ Երբ որ զառամեալ, անառակ և հեշտասէր տօկտօր Ռուզկոտը պարկած էր մահճի վերայ, և նորարերեկամերից մինը հարցրեց թէ, չէ՞ կարող արգեօք ինքը նորա համար մի որ և իցէ ախորժելի բան անել, մեռանողը պատասխանեց։ * Այս վերադարձը ինձ իմ երիտասարդութիւնը։ Միայն այս նորան տալ — և նա կզզայ, և նա կուղզէի։ Բայց արգէն ուշ էր, նորա կեանքը կապւած էր սովորութեան շղթաներով։

Սովորութեան ուժի մասին խօսելով, սուրբ Օգոստինոս իւր ։ խոստովանութիւնների, մէջ այսպէս է ասում։ * թշնամին իմ կամքիս տիրեց և նորանից շղթայ շինեց, որով և ինձ շղթայեց, որովհետեւ քմապաշտ կամքից անառակութիւն ծագեցաւ, անզուսպ անառակութիւնը սովորութիւն դարձաւ, և ոչինչ արգելքի չհանդիպելով։ Կարեսորութիւն եղաւ։ Շղթայի այս օղերը, այսպէս էի ես նոցա անւանում, մինը միւսի հետ միացած, ինձ պինտ շղթայած էին պահում։

* Նուագայարդար (compositeur) Գրէտրին, կնոջ նշանակութիւնը իրեւ բնաւորութեան դաստիարակչուհու այնպէս վեր դասեց, որ բարի մօրը անւանեց։ * բնութեան օրինակելի արգարութիւն։ Նա իրաւունք ունէր բարի մայրերը հայրերից առաւել շատ ձգուումն անդադար վերանորոգել մարդկային ցեղը, տան բարոյական մմնոլորտը ստեղծելով։ Որ մարդկի էութեան սնունդի տեղ է ծառայում։ ինչպէս և ֆիզիդական մմնութորով նորա մարմնաւոր կազմութեան համար, բանականութեամբ առաջնորդւած բարի բարքի, վարմունքի, քաղցրութեան և հեղութեան միջոցով կինը իւր ընդուժներին շրջապատումէ ուրախութեան, առատութեան և խաղաղութեան մշտական մմնոլորտով, որը յարմար է ամենաբարոյական և ամենահզօր բնութեան զարգացմանը։

Ամենաղքատ բնակարանը, որը կառավարումէ բարեգործ, խնամածու, ուրախ, մաքրասէր կինը, կարօղ է լինել մի անկիւն, լցուած խրախոյսով բարեգործութեամբ և բաղզաւորութեամբ։ Նա կարօղ է լինել ընտանեկան կեանքի մէջ աղնիւ յարաբերութիւնների ասպարէղ, շատ սիրալի յիշտակներով և մարդի թանկագին սրտի համար տաճար, կենսական փոթորիկներից պաշտպանւելու ապաստանարան, աշխատանքից յետոյ — խաղաղ նաւահանդիսու, անրազտութեան ժամանակ — միսիթարութիւն, բալտաւորութեան ժամանակ — հպարտութիւն, և միենոյն ժամանակ ուրախութիւն։

Այս կերպով, աղնիւ ընտանեկան շրջանը դպրոցներից ամենալաւն է, ոչ միայն մանկական, այլև չափահաս հասակում։ Այնտեղ և ծերերը,

և երիտասարդները ամենից աւելի լաւ են ընտելանում բարութեան, չամբերութեան, ինքնապահպանողութեան և պարտաճանառչութեան ոգուն։ Կասխակ Ռւալթոնի խօսելով Զորժ Հէրբէրէի մօր մասին՝ ասաց, որ նա առանց խստութեան և առանց կոպտութեան, խոհեմ հոգացողութեամբ կառավարում էր իւր ընտանիքը, բայց այնպիսի քաղցրութեամբ և ներողամտութեամբ էր նայում մանկական զուարձութիւնների և դրուանքների վերայ, որ նոցա սովորեցրեց վատժամանակը անցկացնել զուարձութեան մէջ, որ նորան պատճառումէր մեծ բաւականութիւն։

Ընտանեկան շրջանը քաղաքավարութեան ամենալաւ զպրոցն է, որին միշտ կինը ամենալաւ զաստիարակ է լինում։ «Առանց կնոջ, —ասումէ Պրովանսալաւական առածը, —մարդիկ վատ կրթւած լակուներ կլինէին»։ Ընտանեկան կեանիքը կեզրոն է, որտեղից փայլումն մարդասիրութեան ձառագայթները։ «Սէրը գէպի այն փոքրիկ ընկերութիւնը որին մենք պատկանում ենք հասարակութեան մէջ»։ —ասումէր Քէրկը—հասարակական ամենայն տեսակ զգացմունիքների սերմն է կաղմում։ «Ամենալաւ և իմաստուն մարդիկը չէին ամաչում խոստովանել, որ նոցա համար ամենամեծ ուրախութիւն և բաղդաւորութիւն է նստել մանկական ընկերութեան հետ ընտանեկան սրբազան ընկերութեան մէջ։ Պարտքերի անշահասէր կատարումն այստեղ ամբողջապէս նախապատրաստութիւնների կատարման համար։ այն հայրը, որ սիրումէ իւր ընտանիքը, ոչ պակաս անկեղծութեամբ իւր հայրենիքը կոիրէ և նորան կծառայէ։

Բայց եթէ ընտանիքը, իբրև բնաւորութեան դաստիարակ, զպրոցներից ամենալաւը կարող է լինել, և լինումէնաև ամենավատը։ Մանկութեան և հասուն հասակի միջին ժամանակում, տղիտութիւնը ի՞նչպիսի անթիւ չարիք կարող է պատճառել, եթէ նա տիրապետէ ընտանիքի մէջ, Պարզիք սկզբից մինչև վերջին շունչը ի՞նչ աշազին բարոյական տանջանքներ և հիւանդութիւններ կարող են պատճառել անխօսիմ մայրերը և զաստիարակները։ Մանուկին յանձնեցէք անարժան, տգէտ կնոջ հոգացողութեան —և ոչ մի զարգացումն ապագայ կեանիքի մէջ չպիտի կարողանայ գորանից յառաջացած շարիքի առաջն առնել։ Թող մնյը լինի անգործ, արատաւոր, ցոփ, իսկ նորա բնակարանը զանազան պղծութիւններով, լրբութիւններով, խոռվութիւններով լցւած, —և նա թշուառութեան կամ նեղութեան բնակարան կլինի։ Նա կլինի այնպիսի մի տեղ, ուր ոչ միայն ապաստանարան չէ կարելի գտնել, այլ մինչեւ անզամ հարկաւոր կլինի այնտեղից հեռու փախչել։ այն մանուկները, որոնց անբաղդ վիճակը ստիպում է այդպիսի տեղում դաստիարակի իւր, բարոյապէս խանզարւած լինելով։ և ուրիշների թշուառութեան պատճառ են լինում։

Նապօլէօն Բօնապարտը առ հասարակ ասում էր, «մանուկի ապառնի լաւ կամ վատ գործերը ամբողջապէս մօրից կախումն ունին»։ Նա ինքը կեանիքի մէջ իւր բարձրանալը վերագրում էր գլխաւորապէս իւր կամքին եռան-

դի և ինքնապահպահութեանութեան գաստիարակութեանը՝ որ կատարւած էր տան մէջ իւր մօր ձեռովու ։ Քացի իւր մօրից ոչ որ նորա վերոց իշխանութիւն չունէրու — ասում է ։ Կապօլէօնի կենսապիրներից մինը — որը քնչշութեամբ խստութեամբ և արդարութեամբ կարողանում էր որդու սէրը, յարգանքը և հնազանդութիւնը վայելել, ուս մօրից սովորեցաւ ։ Ֆնազանդութիւն ու բարեգործութիւն

Որդոց բնաւորութիւնը թէ ինչ աստիճանի կախումն ունի մօր բնաւորութիւնից՝ մենք այդ կարգումինք Տուփի Նէլլի նախարարի գործոցական հաշիւներից մինի միջ ։ Եւս ճշմարտութիւնը — ասումէ նայ ։ ամեն մարդ հաստատ զիսէր որ մայրը մինչև անգամ վաճառ ականական հաշիւների մէջ ևս նոցա տուաջնորդում է ։ Ես տեղեկացայ տիրուհուց ։ ասում է զարձեալ նա ։ որ մեծ հաշւարանում, ուր ծառայում էին շատ մանուկներ, մանուկին աշխատութեան համար վարձելուց առաջ միշտ նորա մօր բնաւորութեան մասին էին տեղեկանում ։ Եթէ ոչս վերջինս բաւականացուցիչ էր ։ ուրեմն կար բաւականաչափ ապահովութիւն, որ ոյն մանուկները իւրեանց լաւ կպահեն։ Հօր բնաւորութեան մասին երբէք ոչինչ ուշազբութիւն չէի գարձնում» ։

Նոյնպէս նկատւած է, որ այնպիսի գեղքերում, երբ մանուկների հայրը վատ մարդ է լինում, օրինակ հարրեցող կամ ընդհանրապէս անբարոյական, բայց եթէ մայրը միայն խոչիմ և փութաջան է ։ ընտանիքը մնում է անքակտելի, և մանուկները հաւանականարար, ազնիւ ճանապարհով կզբնան, մինչդեռ հակառակ զեղքում, երբ մայրը լինում է անառակ, մանուկների լաւ ուղղութեան համար տրւած օրինակները ապագայ կեանքի մէջ համեմատարար քիչ են որչափ և հայրը իւրեան լաւ պահէր։

Բնաւորութեան զարգացման վերայ կանանց գործած ազգեցութեան մէծ մասը անշուշտ անյայտ է մնում։ Դնալով պարտաւորութեան ճանապարհով, նոքա անընդհատ աշխատանքների, համբերութեան և հաստատամբառութեան միջոցով տան և ընտանիքի խաղաղ միայնութեան մէջ իւրեանց գործն են կատարում։ Կանանց ամենաերեկի քաջագործութիւնները անգամ իւրեկ մասնաւոր և ընտանեկան գործողութիւններ այս զրութեան մէջ սակաւ են յայտնի լինում։ իսկ շատ անգամ մինչև նշանաւոր մարդիկների կենսագրութիւնների մէջ կպատահի լսել այն մասնակցութեան մասին, ինչ որ մայրը նոցա բնաւորութեան զարգացման ժամանակ և նորան դեպի բարին ցոյց տուած ուղղութեան մասին ունեցել է, բայց այս պատճառով նոքա առանց հատուցման չեն մնում։ Մօր արած ազգեցութիւնը, թէպէտ և նա արձանագրւած չինի, նորանից յետոյ ևս մնում և պահպանում է առ միշտ ապագայ հետեանքների մէջ, նշանաւոր կանանց մասին մենք շատ սակաւ ենք լսում, քան թէ ոյր մարդիկների մասին։ Մեծ մասամբ մեզ պատահում է միայն բարի կանանց մասին լսել, մինչդեռ չէ կարելի չասել, որ յետագայ կանանց և այր մարդիկների բնաւորութիւնը դեպի բարին ուղղելով նոքա համեմատարար աւելի մեծ գործ

են կատարում։ քանի թէ օրինակ եթէ նոքա նկարեին մինչանաւոր պատկեր շարադրեին զլբեր կամ յօրինեին երևելի սպերաներ։ Քոլորովին ծշմարտում է ։ — ասաց Փողեփ տիօ—Մէստր։ որ կանոյք ըստեղծեցին ոչինչ օրինակելի աշխատասիրութիւններ։ Նոքա չգրեցին ոչ ։ Ելիական ։ ոչ ։ Ազատեալ Երուսաղէմ ։ ոչ ։ Համլէտ ։ ոչ ։ Ֆէտրի ։ ոչ ։ Գրախատ կորուսեալ ։ ոչ Տարտու Փայտ ։ Նոքա Ա. Պիտրոսի եկեղեցին չկառուցին, չըստեղծեցին։ Քէլվէտէրի Ապօղօն ։ չգրեցին ։ Ահեղ գատաստան ։ Նոքա ոչ ալկէպրաներ յայտնադործեցին ոչ խոշորացայցներ ։ ոչ շոգեշարժ մեքենաներ։ բայց կանոյք այս ամենից ոչ սակաւ աւելի մեծ գործեր արին։ նոցածնկերի վերայ դաստիարակւեցան ամենազնիւ և բարեգործ մարդիկները և կանոյքը, — երկրի վերայ ամենալաւ բերքը ։ Տեօ—Մէստր իւր նամակների և շարադրութիւնների մեջ չափազանց սիրով և յարգանքով է խօսումիւր մօր մասին։ Նորա ազնիւ բնաւորութիւնը միւս րոլոր կանանց և ս նորա յարգանքին արժանի արաւ։ Նա նորան անւանումէ անհամեմատելի մայր։ Հրեշտակ։ որին Աստուած կարծ միջոցում ընծայելէ մարդկամին պատկերու ։ Նա իւր բնաւորութեան ուղղութիւնը գէպի բարին՝ իւր մօրն է վերագրում։ վերջերում Հասուն-տարիքի հասնելով եւ Ա. Պետէրուրգի մեջ դեսպան լինելով։ Նա իւր կեանքի մեջ տիրապօղ ազդեցութիւն էր Համարում մօր վսեմ պատուէրները եւ օրինակը։

Սամուել Զօնսօնի լինաւորութեան մեջ ամենահրապուրիչ առանձնութիւններից մինը առանց ուշագրութիւն դարձնելու նորա դաժան և անձունի արտաքին տեսքի վերայ քնքութիւնն էր որով նա միշտ իւր խելացի մօր մասին խօսումէր։ որ իւր սեպհական գիտակցութեան համեմատ մանուկի մոքի մեջ կրօնի առաջին սկզբունքները պինտ կերպով հաստատեց։ Նա սովորութիւն ունէր մինչեւ անդամ ամենադժւարին հանգամաների միջոցում բոլոր իւր չքաւոր միջոցների ժամանակ հետելու ։ որ իւր մայրը փափկութեան մեջ ապրի։

Գէորգ Ռւաշինգտոնը, հինգ որդիներից մեծը տասն և մէկ տարեկան էր, երբ նորա հայրը մեռաւ, մայրը այրի թողնելով։ Աա հազւագիւտ արժանաւորութիւնների տէր կին էր, լաւ կրթւած, գործունեայ աշխատասէր և շատ հզօր բնաւորութեամբ։ Նա իւր որդիները ոկտիտ դաստիարակէր, մեծ անահետութիւն պիտի վարէր, ընդարձակ կալուածներ պիտի կառավարէր, և այս ամենը նա լիովին յաջողութեամբ կատարեց։ Այս կնոջ բարի բարքը, նորա ջանասիրութիւնը, քնքութիւնը աշխատասիրութիւնը և անխօնջութիւնը նորան կարողութիւն էին տալիս արգելքները հեռացնելու ։ իւր աշխատութիւնների և հոգսերի ամենալաւ տրիտուր նա համարումէր տեսնել ։ իւր որդիքը կենսական ճանապարհի մեջ մտած լաւ գրաւականներ։ տեսնել նոցանից իւրաքանչիւրին այնպիսի մի տեղում, որ միօրինակ պատիւ բերէր թէ նոցա և թէ իւրեան։ որ նոցա համոզմունքների, գործերի և սովորութիւնների միակ առաջնարդն էր, Գրօմուելի կենսագիրը նորա հօր մասին շատ քիչ է խօսում։ բայց եր-

կար կանգնումէ նորա մօր մեաւ որութեան վերայի որին նա նկարագրումէ իրեւ մի կնոջ՝ հազւագիւտ դւժով և բնաւորութեան հաստատութեամբ։ Այս կինը՝ ասումէ նա, — փառքի արժանի ձիրք ուներ իւրեան օգնելու երբ ուրիշը նորան չէր օգնում։ բաղզի ամենազաժան պահանջները միշտ ընդունելու պատրաստ էր, թէպէտ և նորաոգու ոյժը և եռանդը հաւասարում էր նորա հեղութեան և համբերութեան։ Աեփհական ձեռքի աշխատանքով նա իւր հինգ գուստրներին տուաւ բաւականաշափ օժիտ, որոնք ամուսնութեան միջոցով կարողացան մուտ գործել այնպիսի ընտանիքների մէջ։ որոնք նշնչափ պատւաւոր էին, որչափ իւրեանց ընտանիքը բայց առաւել հարուստ քան թէ իւրեանցը, նորա միակ հըպարտութիւնը ազնւութիւնն էր, իսկ միակ ցանկութիւնը — սէրն էր։ Ուայտգոլսկի շքել, շառյլ ամրոցում նա իւր հասարակ սովորութիւնները պահեց, որոնք նա Գոտինգտոնի գարեջուր եփելու տան մէջ իւրացրել էր։ այս կնոջ միակ հոգու բոլոր շրջապատող պայծառութեան մէջ իւր որդու աղահովութիւնն էր այս փառահեղ, բայց անհաստատ դրութեան մէջ։

Մենք նապօլէոն Բոնապարտի մօր մասին խօսեցանք, իրեւ մի նշանաւոր հզօր բնաւորութիւն ունեցող կնոջ մասին։ Ուէլինկաոն դուքսի մայրն ևս իւր բնաւորութեամբ պակաս հզօր չէր։ որի որդին թէ իւր տեսքով և թէ իւր բնաւորութեամբ զարմանալի կերպով նման էր նորան։ Ուէլինգտոնի հայրը իրեւ նուազածու և նուագածածու շատ նշանաւոր էր։ բայց որչափ և այս օտարութի չլինէր։ Ուէլինգտոնի մայրը նորան տգէտ էր անւանում։ և այս կամ այն պատճառով, նա իւր կնոջ սշնչափ սիրելի չէր, ինչպէս միւս որդիները մինչև այն ժամանակ, երբ Ուէլինգտոնի ձեռք բերած նշանակութիւնը նորան ստիպեց իւր որդով պարհենալու։

(Աշտառ-հայիք)

Գ. Ռ'Է. Օ. Դաս. ալ. Թ. Պ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Հնդկաստանի Բաղաւիա քաղաքացի բարեյիշատակ Մանուկ Յորդանանեան բարեպաշտ Հայը 1875 թուականում օրինասահման եղանակաւագականներին և բարեկամներին իւր կտակները աւանդելուց յետոյ, կրօնասիրական և ազգասիրական զգացմունքներից ստիպեալ աւանդած է Ազգային հաստատութեանց համար ևս հետեւալ կտակները։ Ա, Խոպահանուսուրը Ստեփանոսի եկեղեցուն երիտ հուշտ բարելին։ Բ, Բաղաւիոյ Հայկական եկեղեցուն հինգ հորիու բարելին։ Գ, Բաղաւիոյ «Հոյին» անուամբ բարեգործական Ֆեմարապնին հինգ հորիու բարելին։

Թէ վերդիշեալ Ազգային հաստատութեանց և թէ իւր բարեկամաց և ազգականաց իւր կտակները հասուցանելուց յետոյ յաւելիալ գումարը ևս կտակել է Խոպահանու Հայկական ժողովրդեան ազգ, հաստատութեանց